

Ի նմանութիւն խաչին Քրիստոսի:
 Երկոտասան ակամբ զարդարեալ
 Սկիհ սրբութեան ի սուրբ սեղանին,
 Իսկ բանն հօր Յիսուս Միածին
 Բնակէ անբաժ յահագին բեմբին,
 Ուստի բաշխի հացն կենդանի,
 Որպէս այսօր յայս սուրբ սեղանիս:
 Ո՛վ գովելի սեղան հրաշալի,
 Դու ես նման հրեղէն աթոռին,
 Ի քեզ հանգչի Հայր անճառելի
 Եւ Իւր Որդին միշտ պատարագի.
 Եւ Սուրբ Հոգին հովանաւորի
 Ը՛ առատ բաշխէ զչնորհս ամենի:
 Զքեզ աղաչեմ, սուրբ եկեղեցի,
 Լեր օգնական հայկականս տոհմի.
 Ընկալ զմաղթանս մեր, Որդի Աստուծոյ,
 Ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ, աղաչեմք:



ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅԻ

«Гражданинъ» լրագրում մի գիւղական քահանայ՝ քահանաներին նիւթական ապահովութեան խնդրի մասին մի յօդուած գրելով, առաջարկում է վերացնել այն տարբերութիւնները, որ գնում է ուղղափառ եկեղեցին եկեղեցական պարտադիր և ոչ պարտադիր կարգերի մէջ, որովհետեւ քահանան իւր հօտի կարիքների վերաբերեալ բոլոր կարգերը պարտադիր պէտք է համարէ և կատարէ, և առաջարկում է գիւղական քահանային 900 ռ.

առճիկ եկեղեցական ըզրոր օրէնքները ձրի կատարելու պայմանով: «Պէտք է, ասում է նա, քահանան կարողանայ որոշեալ ժամանակ, որոշեալ պարագաներում ազատ իւր օրէնքները կատարել: Նա ոչինչ չպէտք է առնէ և չպէտք է մտածէ, որ դորանով իւր ընտանիքը կ'իմաստուի: Չպէտք է կարիքը քահանային այն աստիճանի հասցնէ, որ նա խաչը ձեռքին ստորացած կանգնի ինչ է, պառաւը թևի տակից կհանէ թաշկինակը, 15 կապ յետ կանէ, և ապա մի կտոր պղինձ կտայ իբրև վարձ մաղթանքի, աղօթքի, հոգեհանգըստի և այլն. հարկաւոր է, որ քահանան պատուով դուրս դայ հարբած գիւղացու խրճից (տօնին տնօրհնէք շրջելիս), և ոչ թէ սպասէ, մինչև սա այս ու այն կողմը ընկնելով, քահանային ծաղրելով, և երբեմն էլ հայհոյելով՝ տայ քսան կոպէկի տեղ հինգ կամ տասը կոպէկ: Հարկաւոր է, որ քահանան ամէն ժամանակ առանց բարկանալու կամ հոգեկան մի ցաւ զգալու կարողանայ առաջարկել խեղճին, որ ձրի կկատարէ մաղթանք, հոգեհանգիստ, ջրօրհնութիւն և այլն, մինչ նա այդ չէր կարող անել, երբ վարձատրուելու ակնկալութիւն ունենար, թէ պէտայդպէս վարուելու ցանկութիւն էլ ունենար: Հարկաւոր է վերջապէս, որ առաքելական խոնարհութեամբ սաքերից վողին թափ տալով՝ կարողանայ նա խրճից դուրս դալ, ուր նորան իբրև աշխատանքի վարձ մանէթի տեղ հինգ կոպէկ են տալիս և յետևից ծանր խօսքեր ուղարկում»:

Ապա քահանան իւր կեանքից մի գէպը է պատմում: Քառասունքի օրը եկեղեցում ինքը պատարագ է մատուցանում, յետոյ պատարագի տիրոջ խնդրով տուն է գնում հանդիստ կատարելու: Ներկայ եղողներին քահանան պատմում է հանդերձեալ կեանքի մասին և հանգուցեալի մասին: Բոլորն ուշադիր են: Սեղանը վերջանում է. սկսում է մի խլրտիւն, ըզրորը փոփսում են, իսկ քահանան նստած սպասում է՝ դիտենալով հանդերձ: որ իրեն շատ կամ քիչ տալու համար են վիճում. դալիս է տանտէրը թէ՛ «Տէ՛ր հայր, ինչքան տամ աշխատանքի վարձ», Սկսում է ծախսը. էլի աղմուկ, փոփոց, և սովորաբար գիւղացին բերում է փողը և խնդրում զիջել, խղճալ, սպասել . . . Անձամբ պէտք է փորձած լինել հասկանալու համար այդ դրութեան ծանրութիւնը:

„Церк. Бѣст.“ խմբադրութիւնը հետեւեալ գիտողութիւնն է աւելացնում այս առարկութիւնների վերայ: Եթէ ծխականը իմանայ, որ ինքը քահանային վարձ տալու պարտաւորութիւնից ազատ է՝ շատ աւելի մեծ պահանջներ կանէ նորանից, այնպէս որ քահանայի կատարելիք օրէնքները այնքան կ'շատանան, որ նա ստիպուած պէտք է լինի նոցա համար մի կարգ սահմանել, իսկ

հետևանքը պէտք է լինին էլի նախկին անբաւականութիւնները քահանայի և ծուխի մէջ:

—Հոգևոր դպրոցների մէջ լինելիք բարեփոխութեանց առթիւ „С. П. В.“ լրագիրը մի քանի խօսք է ասում եկեղեցական ընթերցանութեան մասին: Ռուսաց եկեղեցում յընթերցողների մեծ մասը դաստիարակ էն՝ հոգևոր դպրոցներից վաճառականներ, որոնք աստուածաբանական դիտելիքների և եկեղեցում իրենց կարգադատ գրքերի խմատի մէջ թափանցելու ոյժ ու կարողութիւն չունին: Աւետարան կարգալու ժամանակ սարկաւազները վայելուչ շարժումներ չեն անում և շատ են գոռում: Քահանաները արամաքանական շեշտերին չեն հետևում, աղօթքների մէջ դիմումը խնդրից չեն որոշում և յաճախ քնաբեր ձայնով են քարոզներ խօսում, և այլն:

—«Церк. Вѣст.» մի ուրիշ հանդիսից առնելով բերում է այս խրատական դէպքը: Բաւական ժամանակ առաջ մի երիտասարդ քահանայ այրիանում է: Մենակ մնալով որոշում է իրեն բոլորովին նուիրել եկեղեցուն և իւր հօտին, և նախ՝ ամեն օր պատարագ մատուցանել իւր եկեղեցում, որպէս զի իւր միջնաբերութիւնը աղօթքների մէջ գտնէ, միևնոյն ժամանակ աղօթել կամեցող ծխականներին յարմարութիւն տայ եկեղեցի յաճախելու, երբ կամենան: Քահանայի այս վճիռը դուր չի գալիս սաղմոսերգուն, որ գանգատում է թէ ամենօրեայ ժամերգութիւնը իրեն աշխատանքից յետ է ձգում և աղքատութեան հասցնում: Երեցփոխն ևս նորա կողմն է անցնում, պատճառաբանելով, որ ամենօրեայ ժամերգութիւնից և պատարագից եկեղեցին վնաս չունի: Բայց քահանան իւր գործը շարունակում է: Սկզբներում հասարակ օրերը ժամերգութեան միջոցին եկեղեցում մարդ չէր լինում: Բայց շուտով ծխականները իմանալով, որ ամեն օր ժամերգութիւն կայ՝ սկսեցին կամաց կամաց յաճախել եկեղեցի: Քահանայի հաջաւոր տարածում է և շրջակայքում, որտեղից ևս սկսում են մարդիկ գալ: Բայց այս որովհետև եկեղեցին մեծ ճանապարհի վերայ էր գտնւում, ճանապարհորդները անցնելով, որ եկեղեցին բաց է, մտնում էին աղօթում: Աւերջապէս, գիւղացիք այնպէս սովորեցին եկեղեցի յաճախել, որ ամեն օր դործի երթալուց առաջ պարտք էին համարում մտնելու, մի մոմ վառելու պատիւերի առաջ: Ասելն էլ աւելորդ է, որ աղօթաւորների յաճախակի այցելութիւնները մեծ օգուտ էին տալիս ոչ միայն եկեղեցու պաշտօնեաներին, այլ և եկեղեցուն, որը իւր ողորմելի վիճակից դուրս եկաւ և հարստութիւն ձեռք բերեց: Ինքը քահանան, որ անշահ կերպով էր իւր գործին կպել՝ գիւղացիների մէջ վստահու-

թիւն և յարգանք վայելել սկսեց: Հեռու գիւղերից նորան օգնութեան և մխիթարութեան էին գիմում:

—Թէ որչափ հարկաւոր բան է, որ միսիոնարներն այն ժողովուրդներն լեզուն իմանան, որոնց հետ գործ ունին՝ կենդանի ապացոյց է հետեւեալ դատաստանական գործը, որի մասին գրում են «С. II. В.» Լրագրին Բայկալից:

Տեղական մի միսիոնար իմացաւ, որ բուրեադուհին Խամբուեւան, թէ և խոստովանւում է և հաղորդւում, բայց շարունակում է «բուրխան»ներին երկրպագութիւն անելը: Մի անգամ նա, անսպասելի կերպով, մտաւ բուրեադուհու սենեակը և տեսաւ որ յատակի վերայ պատկերի մօտ դրուած է և բուդդայական աստուածը:

Միսիոնարը զանգատուեց, և բուրեադուհին ուղղափառ կրօնից յետ կենալու համար դատի ենթարկուեցաւ: Դատաւարութեան ընթացքում պարզւում է, որ բուրեադուհին 14 տարեկան հասակումն է մկրտուել և ռուսերէն բոլորովին չի հասկանում: Միսիոնարը ասում է, որ ինքը շատ է համոզել, բայց բոլոր յորդորները իզուր են անցել:

—Ի՞նչ լեզուով էիք խօսում, հարցնում է պաշտպանը.

—Բուրեադերէն.

—Դուք բուրեադերէն լա՞ւ էք խօսում.

—Հը, քիչ-շատ:

Պաշտպանը խնդրեց, որ միսիոնարը բուրեադերէն մի քանի նախադասութիւն ասի, բայց նա մի այնպիսի լեզուով ասաց, որ ոչ ոք չէր կարող բան հասկանալ:

Պարզ էր, որ միսիոնարի այսպիսի լեզուով արած բոլոր յորդորները բուրեադուհու համար բոլորովին անհասկանալի պէտք է մնային:

Նախագահը թարգմանի միջոցով հարցնում է Խամբուեւային, թէ արդեօք սա իրեն յանցաւոր ճանաչո՞ւմ է: Այս հարցը Խամբուեւայի զարմանքն է շարժում. ի՞նչ յանցանք, նա մարդասպան չէ և ոչ էլ գող:

Նախագահը նորից հարցնում է. ո՞ւմ է նա աղօթում:

Բուրեադուհին պատասխանում է. «Քրիստոսին և Բուրխանին»:

Դատարանը զիջող գտնուելով դէպի միամիտ ոճրագործ բուրեադուհին՝ յանձնեց քահանային, որ հասկացնէ նորան քրիստոնէական կրօնի էութիւնը և համոզէ:

—Այն մեծ նշանակութիւնը, որ կարող է ունենալ միսիոնարի օրինակելի անձնաւորութիւնը քարոզչական գործում, պարզում է արեղայ Պղատոնի մասին պատմածը «Енисейск. Епарх. В-ում»:

Սա մի անշահատեր, հոգի մարդ է, որ կարողանում է հիւսիսային տունդրաններում (սառած ճահիճներում) ապրող ժողովուրդների լեզուով խօսել, նոցա մտածողութեան եղանակին յարմարուել, որով և մեծ յարգանք է վայելում: Մի ծերունի (իւրակ), որ իւր թոռների հետ մկրտուել է, պատմում է, թէ երկու առաջնորդ և երեք քահանայ չեն կարողացել իրեն համոզել, իսկ սա քիչ խօսքերով տրամադրել է նորան մկրտուել, Պղատոն արեղան Ջատունդրեան և Ենիսէյի շրջակայքում, նոյն իսկ Ենիսէյի շրջանի ամենահիւսիսային կէտում, շատերին քարոզել է և մկրտել: Շատ անգամ նա մկրտութիւնը ուշացնում է կէս տարով, չընայած ցանկութիւն յայտնողների աղաչանքներին: Նա իւր հոգեւոր աշխատանքի վարձ ոչ մի ժամանակ չի առնում նոցանից, ձրի ծառայելը իւր պաշտօնի գլխաւոր հիմքերից մէկը համարելով: Ընդհակառակը կարօտեալներին ինքն էր օգնութիւն տալիս, ինչպէս օր. հիւսիսային մասում ընակուողներին, որոնք ժամանակ ժամանակ որսի կամ ձկնի պահատութեան պատճառով սոված են մնում:

Նա ձրի պատկերներ էր բաժանում, որոնց համար առաջ վաճառականները 3-4 մանէթ էին պահանջում. նշան դրուածներին արծաթեայ մատանիներ էր տալիս, նոր մկրտուածներին շապիկներ և խաչեր: Ուր էլ որ գնար իւր ժողովուրդը, ինքը հետները գնում էր և ամեն տեղ նոցա համար աշխատում:

— Ստեփան անունով մի քահանայի մասին հետեւեալն են պատմում: Մեծ սէր ունենալով ընթերցանութեան, մանաւանդ հոգեւոր գրքերի, և գրքեր ձեռք բերելու կարողութիւն չունենալով, այս քահանան կարգում էր ծխական եկեղեցում գտնուած գրքերը: Սեպհական առտուածաշունչը իւր կեանքում նա տաան անդամից աւելի է կարգացել: Եկեղեցում նա քարոզներ չէր խօսում, բայց տանը ծխականներին ընտանեկան զրոյցներ էր անում: Օրինակ, ծխականներից մէկը հրաւիրում է հ. Ստեփանին տուն մի մաղթանք կատարելու. քահանան տիրացուի հետ դալիս է և կարգը կատարում: Նստում են սեղան հիւրերի հետ: Է. Ստեփանը մի սրբի կեանքից խրատական կտոր է առնում և սկսում է դորա մասին ոգեւորող և հրապուրիչ մի զրոյց անել, որը երբեմն ժամից աւել է տևում: Պատահում է, որ մինչև սեղանի վերջանալը նա իւր զրոյցն է անում, սոված տուն է վերադառնում և ուտում է ինչ որ պահել են, երբեմն էլ միայն հաց թթու ջրով, և գնում է իւր սովորական աշխատանքներին, կուշտ և բաւական:

— Զինական խռովութիւնների ժամանակ Պեկինում և ուրիշ տեղերում գտնուած ուղղափառ քարոզչական հաստատութիւնները քարուքանդ եղան, որոնց նորոգութեան համար Ս. Սինօգը

150,000 մ. յատկացրեց, բայց չբաւականացաւ: Պակասը խընդրելու, և որ գլխաւորն է՝ միսիոնարական գործին նոր օժանդակ միջոցներ գրաւելու համար, միսիոնի գլխաւոր Իննովկենտիոս վարդապետը Պետերբուրգ եկաւ: Նա ասում է, որ անհրաժեշտ է Պետերբուրգում մի տուն շինել իւր եկեղեցիով՝ չինացի ուղղափառների համար: Տունը և եկեղեցին կարելի է չինական ոճով շինել: Այս տան մէջ նա ուզում է մի ապաստանարան հաստատել Պետերբուրգում՝ բնակուող չինացիների որդւոց համար, որոնք այսպէսով չինական հեթանոսական միջավայրերից հեռու կմնային: Ուսումը այստեղ վերջացնելուց յետոյ չինացի երիտասարդները կարող էին Չինաստան վերադառնալ և ձեռք ձեռքի տուած աշխատել ռուս ուղղափառների հետ: Եկեղեցու մօտ նոյն վարդապետը ցանկանում է մի քարոզչական բնմ հաստատել, որտեղից ճեմարանի ուսանողներն իրանց քարոզները կարդային:

Վարդապետի այս ձեռնարկութիւններին իւր համակրութիւնը յայտնելով «Новое время» ասում է. «Ինչո՞ւ չի կարող բարի սերմնացանների և Ռուսաստանի բարեկամների ցանած սերմը ապրել, արմատ բռնել Չինաստանում և Մանչուրիայում, մինչդեռ այստեղ օտարերկրացի միսիոնարների թիւն օրէցօր աւելանում է:

—«С. П. В.» լրագրում «Հոգւոյ ինքնավարութեան» նկատմամբ մի յօդուած լոյս տեսաւ:

Այս ինքնավարութիւնը հոգւորականութեան տրուած է ազատութեան բարենորոգումների ժամանակ, երբ հաստատուեցան նահանգական և դաւաճական ինքնավարական ժողովները: Հոգւոր ինքնավարութեան համաձայն թեմի հոգւորականութիւնը կարող է ժողովներ գումարել իւր կարիքների մասին մտածելու: Բայց որպիսի մեծ տարբերութիւն կայ նահանգական, դաւաճական և հոգւոր-թեմական ժողովների մէջ, թէ էութեան և թէ հետեանքների կողմից:

Թէև առաջինների վճիռներից ու որոշումներից մի քանիսը (և ոչ բոլորը) նահանգապետները կարող են չհաստատել, այնուամենայնիւ ժողովների ինքնուրոյն գործունէութեան համար մեծ ասպարէզ է մ'նում՝ նորանով, որ այդ վճիռները չհաստատուելու պատճառ չկայ. այն ինչ հոգւորականութեան ժողովների որոշումները առաջարկում են թեմական առաջնորդի հաստատութեան, որը ոչ միայն մի քանիսը, այլ կարող է բոլորն էլ չհաստատել: Բացի սորանից թեմական առաջնորդը ժողովի ընտրած նախագահին չհաստատելով՝ կարող է իւր կողմից մէկին նախագահ նշանակել: Այսպիսով, ասում է լրագիրը, հոգւորականութիւնն ոչինչ կատարել չի կարող, այլ միայն մտածել: Եւ

երբ երկար ու բարակ մտածուած որոշումները մերժուած են և թեմակալ առաջնորդից նոր ուղեցոյց կանոններ են ստացուում, ժողովական հոգեւորականութեանը մնում է միայն յարմարուել նոցա:

«Երբ ամեն բան ուրեմն եպիսկոպոսի կամքովն է լինելու, հարց է առաջ դալիս, այլ ևս ժողովները ինչի՞ համար են: Ինչի՞ համար հոգեւորականութիւնը ծուխերից, ընտանեկան պարապմունքներից, դաշտային աշխատանքներից բաժանուած և ծախսերի մէջ է ընկնում: Եթէ ամեն բան եպիսկոպոսի կամքով պէտք է լինի, թող նա էլ ամեն բան ինքն անէ: Հոգեւորականութիւնը նորա բոլոր կարգադրութիւնները պատրաստակամութեամբ պիտի կատարէ: Իսկ եթէ հոգեւորականութեանը իւր որդւոց պէտքերի մասին դատելու իրաւունք տրուած է, այն ժամանակ թողէք, որ ինքն էլ այն կատարէ, ինչ որ պէտքական է գտնուած: Պետք է համոզուած լինել որ հոգեւորականութեան կարիքը հոգեւորականութիւնից լաւ ոչ ոք չի կարող գիտենալ: Եւ հոգեւորականութիւնը այնքան էլ յիմար չէ, որ չը կարողանայ իւր որդւոց վիճակը առանց կողմնակի օգնութեան բարելաւել, ում կողմից էլ լինի այդ օգնութիւնը: Ոչ ոք չի ուղում եպիսկոպոսների իրաւունքը կրճատել, բայց համաձայնեցէք, որ հոգեւորականութեան այս թեմական ժողովները միտք չունին, երբ նոցա որոշումները կատարումն չեն ստանում: Յանկալի է, որ հոգեւորականութեան իւր որոշումները գործ դնելու իրաւունք տրուի, կամ թէ ժողովներ գումարելու և որոշումներ անելու իրաւունքն էլ խլուի նորանից: Բազմամեայ փորձերը ցոյց են տալիս, որ այդ աեսակի ժողովները միայն թշնամութիւն են առաջ բերում եպիսկոպոսի և հոգեւորականութեան մէջ, որ ոչ ոք երբէք չի ցանկանայ:

—«Саратовск. Земск. Неделя» հանդէսը դպրոցներում փոքր երեխաներին եկեղեցական երգեցողութիւն դաս տալուն հակառակ է: Հանդէսի յենակէտը այն է, որ երեխան իւր երգած աղօթքները չի հասկանում:

Երեխաներին եկեղեցում երգել տալու պատճառը հեղինակը համարում է այն, որ չափահասները սոցա երգեցողութիւնից բաւականութիւն են ստանում: առանց հարցնելու, արդեօք մանուկները իրանք ինչպէս են վերաբերուած ընդհանրապէս դէպի երգեցողութիւնը, և մասնաւորապէս դէպի երգած աղօթքները, արդեօք մանուկները ինչ են զգում նախապատրաստական երգեցողութեան ժամանակ, և ապագայում այդ աղօթքները և երգեցողութիւնները նոցա համար ինչ նշանակութիւն կարող են ունենալ:

«Церк. Вѣст. խմբագրութիւնը նորա տեսութիւններին համաձայն չէ սակայն, ասելով, որ եթէ երեխաները իրանց երգած աղօթքները չեն հասկանում, դորանից չպէտք է եղբակացնել, թէ եկեղեցական երգեցողութիւնը երեխաներին դաս չտրուի, այլ նոցա այդ աղօթքները հասկանալու հնարաւորութիւն պէտք է տալ:



Սլաւոնական ծագում ունեցող արքերի պաշտամունքը. — Ռուսաց լրագիրները յայտնում են, թէ 2եխերը մտադիր են դիմել Խ. Սինօգին՝ Յովհաննէս Հուսին սրբերի կարգը դասելու: Այս հարցի առթիւ ոմանք այն կարծիքը յայտնեցին, թէ որովհետեւ Պետրոս Մեծի հրամանով արգելուած է այսուհետեւ որեւէ մէկին սրբացնել, ուստի հարկաւոր է դիմել Յունաց եկեղեցուն: „Новое время“ ասում է, որ եթէ Ռուսաց Խ. Սինօգը Յովհ. Հուսին նոյն իսկ սրբերի կարգը դասելու լինի, դա ընդունելի կը լինի միմիայն Ռուսաց եկեղեցու և 2եխերի կողմից, իսկ եթէ Կ. Պօլսում ընդունուի, այն ժամանակ նշանակութիւն կունենայ ընդհանուր Օրթոդոքս եկեղեցու համար: Այս առթիւ „Церковный Вѣстник“-ի մէջ Հ. Նիկողիմը հետևեալ հետաքրքրական հարցերն է առաջարկում.

ա) Կարելի՞ է արդեօք սրբացնել Յ. Հուսին և ո՞ր դատաւարի սուրբ պիտի համարել՝ մարտիրոս, թէ նահատակ իւր հայրենիքի համար:

բ) Ո՞վ կարող է նրան սրբացնել այնպէս, որ ընդունելի լինի ընդհանուր Օրթոդոքս եկեղեցու կողմից:

գ) Մասնաւորապէս Յունաց եկեղեցու կողմից հաստատուած կանոնը կարո՞ղ է պարտադիր լինել ըստ Սլաւոնական ազգերի համար:

դ) Պետրոս մեծի հրամանը կարո՞ղ է արգելք լինել Յովհ. Հուսին սրբացնելու:

ե) Ի՞նչ տեսակէտից պիտի նայել Յ. Հուսին սրբացնելու կանոնի վերայ՝ եկեղեցական, թէ՞ եկեղեցական—հայրենասիրական:

Այս հարցերին պատասխանելու համար նախ և առաջ կարեւոր է առանց կրքի և կողմնապահութեան խիստ քննել Յ. Հուսինի կեանքը և որոշել՝ ա) նա զուտ մաքուր բնաւորութեան տէ՞ր անձն էր. բ) նրա քաղաքական — եկեղեցական — յեղափոխական գործունէութիւնը ընդհանուր ճշմարտութիւն որոնելու համար էր. գ) նրա մահը զուտ քրիստոնէական էր, համաձայն իւր վերջի խօսքին և գործին. դ) 2եխական ուղղափ. եկեղեցին ի՞նչպէս է նայել Յ. Հուսին այդ քայլի և նրա անձնաւոր-

թուփեան վերայ: Հ. Նիկողիմը իւր կողմից նկատում է, որ Պետրոս Մեծի հրամանը չի կարող արգելք լինել սրբացնելու Յ. Հուսին, որովհետեւ այդ հրամանը ժամանակաւոր նշանակութիւն ունէր և դրանից յետոյ էլ դէպքեր են եղել Ռուսաց եկեղեցում նոր սրբեր ընդունելու, ինչպէս օր. Ս. Միտրոփանին և Տիխոնին, Թէոդոս Զերնիգովսկուն և ուրիշներին: Իսկ յունական եկեղեցու որոշումը ընդհանուր նշանակութիւն չի կարող ունենալ, որովհետեւ սլաւոնական եկեղեցիներին շատերը անկախ են միւսներից, ինչպէս օր. Ռուսաց, Սերբիացւոց, Հելլենացւոց, Բուլղարաց ևն: Ուրեմն Յ. Հուսին կարող է սրբացնել այս դէպքում ամեն մի եկեղեցի իւր համար: Բայց որպէս զի նա միանգամից ընդունուի Օրթոդոքս եկեղեցի կողմից, դրա համար հարկաւոր է ուղղափառ բոլոր եկեղեցիներին կազմուած մի ընդհանուր ժողով և կամ մտքերի փոխանակութիւն դրաւոր կերպով՝ զանազան եկեղեցիների մէջ, կամ ս. Սինօդի միջնորդութեամբ:

Սլաւոնական եկեղեցիների իրարից բաժանուած լինելը պատճառ է լինում շատ տարածայնութիւնների և ձախորդութիւնների: Այսպէս օրինակ ամեն մի Սլաւոնական եկ. ունի իւր համար առանձին սրբեր, որոնցից շատերին միւս եկեղեցիները չեն ճանաչում: Ուստի նա առաջարկում է կազմել բոլոր Սլաւոնական ազգերի համար մի ընդհանուր տօնացոյց, որի մէջ մտնեն Ռուս. Սերբ. Բուլղ. Զելս. Յունաց և Բուլմին. սրբերը և միևնոյն օրն ամեն աեղ որոշ սրբերի տօնը կատարուի:

Տարբերութեանց պատճառ նա համարում է այն հանգամանքը, որ մինչև այժմ Օրթոդոքս եկեղեցի կողմից չեն սուսումնասիրուած ու չեն ճանաչուած նոյն իսկ ամենադիւսաւոր պատմական գործիչները, դորա համար հարկաւոր է ահագին աշխատանք, բազմակողմանի ուսումնասիրութիւն. իսկ երբ այդպիսի աշխատանք պատրաստ կը լինի, այն ժամանակ կարելի կը լինի և ընդհանուր տօնացոյց պատրաստել: Դորանից յետոյ կարելի կը լինի և Յ. Հուսին հարցը առաջ բերել և խնդիրը ինքնատիւնքեան կը վճռուի: Սլաւոնական եկեղեցին այն ժամանակ կարող կը լինի որոշել, թէ պիտի ճանաչէ Յ. Հուսին իբրեւ «եան—Հուս»՝ Վրօնական քաղաքական պարագլուխ Հուսեան շարժման, թէ՛ պիտի ընդունել իբրեւ «Սուրբ Յովհաննէս»՝ Զելսական մարտիրոս:

Վերջին օրերս լրագիրները հաղորդեցին, որ Ռուսաց ս. Սինօդը դիմել է Վրաց եկեղեցուն տեղեկացնելու իրան, թէ ինչ սրբեր ունին և ո՞ր օրերին են կատարում նրանց տօնը: Ինչպէս

երևում է Հ. Նիկողոսի վերոյիշեալ առաջարկութիւնը արձագանք է դառնում Սննդի կողմից:

ԿԸԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Թէ որչափ է օգտւում դեռ կաթոլիկ եկեղեցին Փրանսիայի հովանաւորութիւնից իւր ազդեցութիւնը տարածելու համար արեւելքում, երևում է «Варж. Вѣд.» Պարիզի թղթակցի «Փրանսիայի կրօնական հովանաւորութիւնն արեւելքում, յօդուածից: Փրանսիական կառավարութեան պաշտպանութեան շնորհիւ այսօր եղուիտական կրօնական կարգերը հետեւեալ հաստատութիւններն ունին Տաճկաստանի քաղաքներում. հիւանդանոց, ապաստանարան, մանկանոց՝ Կ. Պօլսում, Ադրիանապօլսում, Սալոնիկում, Չմիւռնիայում, Երուսաղէմում, Բեթղէհէմում, Եաֆֆայում, Բայրութում և Տրիպօլսում:

Ուսումնական հաստատութիւններից յիշելի է Երուսաղէմում արեւելագիտութեան բարձրագոյն ուսումնարանն իւր սեմինարիայով, ուր արեւելեան քրիստոնեաներին կաթոլիկ դարձնելու եղանակն են ուսուցանում, Միկնոյն տեղում կայ աստուածաբանական դիտութիւնները դպրոց: Բէյրութում կայ եղուիտների հիմնած բժշկական ֆակուլտետը:

Պօլսում, Ադրիանապօլսում, Սալոնիկում, Չմիւռնիայում, Բէյրութում, Հալէպում, Բեթղէհէմում, Ռոդոսում, և այլն, ունին լիկիոններ, կոլլեջներ, պանսիոններ ու տարրական դպրոցներ:

Բացի այս Փրանսիայի հաշուով և նորա հովանաւորութեան ներքոյ հայ կաթոլիկներն ևս ունին եկեղեցիներ և ուսումնական հաստատութիւններ հետեւեալ քաղաքներում. Պօլիս, Բէյրութ, Էրզէրում, Էնկիւրի, Հալէպ: Ասորիքի կաթոլիկները Հալէպում և Դամասկոսում ունին նոյն տեսակի հաստատութիւններ: Այս բոլորի վերայ Փրանսիական կառավարութիւնը տարեկան ծախսում է մէկ միլիոնի չափ դրամ:

1902 թուի համար նախահաշիւ կազմող յանձնաժողովը պետական ծախսերի վերայ աւելացրել է և այս հաստատութիւնների վերայ լինելիք ծախսերը, որոնք և պալատում ձայների մեծամասնութեամբ ընդունուեցան:

Ապա թղթակիցը պատգամաւորների ժողովում հետեւեալ խօսքերն է մէջ բերում, որոնք վերաբերում են Արեւելքում Փրանսիայի ազդեցութիւնը զօրեղացնելու եղանակին: «Արդեօք աւե-